

ները պ. Աճառեան հին քերականների նման «կոկորդական» է անուանում (էջ 65), անշուշտ շատ լաւ իմանալով, որ դրանք կոկորդային հնչիւններ չեն:—Երևանի բարբառը պ. Աճառեան անուանում է «ամէնէն մարուր»: անշուշտ այդպիսի ոչ գիտական դարձուածքներից ազատ կարելի էր լինել:—

Բաւականանանք այսքանով: Յիշած պակասութիւնները չեն խանգարիլ պ. Աճառեանի գրքին կատարելու պատուաւոր դեր մեր բարբառների ուսումնասիրութեան գործում: Բայց բացի այդ մասնագիտական նշանակութիւնից, այստեղ կը գտնեն իրենց համար հետաքրքիր և օգտակար գիտելիքներ նաև հայերէնի ուսուցիչները և առհասարակ այն ամենքը, որոնք այսպէս թէ այնպէս հետաքրքրուում են հայագիտութեամբ: Այդ բոլոր նկատումներով յանձնարարում ենք պ. Աճառեանի անպայման օգտակար գիրքը բոլոր մայրենի լեզուովը հետաքրքրուողների ուշադրութեան:

Ռ. Աբրահամեան

Քննութիւն Մալխասեան Հասարակութեանց Ազատագրչոսի  
եւ Ղազարայ Փարպեցոյ ի Նորայր Բիւզանդացոյ.  
Վիեննա 1911 (եր. 161—174):

Սա արտատպութիւն է «Յուշարձան» գրական ժողովածուից, որ հրատարակուած է Վիեննայի Մխիթարեան միաբանութեան 100-ամեայ յորելեանի առթիւ: Ամենից առաջ տարօրինակ է թւում այն, որ չնայելով Ազատագրչոսի ճակատին տպուած է «հրատարակութիւն Ս. էջմիածնի» և ապա «ծախիւք Սուքիասայ արքեպիսկոպոսի Պարզեանց», բայց և այնպէս քննութիւն գրողն այս հրատարակութիւնը վերագրում է Ստ. Մալխասեանին: Իժուար է կարծել, թէ պատահական անուշադրութիւն լինի այս հանգամանքը, որ պատիւ չի բերում քննութիւն գրողին: Ապա, էջմիածնի այս հրատարակութիւնները յաւակնութիւն չեն ունեցել «քննական» կոչուելու. այլ նրանց վերնագիրն է «Պատմագիրք Հայոց, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց»: Ամեն հասկացող, դրանց մէջ և Նորայր Բիւզանդացին, պիտի իմանայ, որ դա մի նախապատրաստութիւն է ապագայ քննական հրատարակութեան և ամենակարևոր նախապատրաստութիւն, քանի որ ամեն

քննական հրատարակութեան հիմքը պիտի կազմի ձեռագիրներէի համեմատութիւնը, և առանց ձեռագրական ընթերցուածներէի ամենայն սրամիտ ուղղում բնագրի մէջ կը մնայ միայն իբրև մի կարծիք ու ենթադրութիւն: Պահանջել, որ ձեռագիրներէի բաղդատութեան հսկայական, այն, հսկայական աշխատանքն անողները միաժամանակ և բնագրի քննական հրատարակութիւն անէին, այդ ոչ մի մարդ իրաւունք չունի: Պիտի առնել այն, ինչ որ տրուած է: Բայց չնայելով սրան՝ Նորայր Բիւզանդացին էջմիածնի այս հրատարակութիւններէի մասին խօսում է այնպէս, իբր թէ զբանք բնագրի քննական՝ հրատարակութիւն լինէին: Մի անգամ որ նա այսպէս թիւր կողմից է մօտեցել այդ մեծ գործին, բնական է, որ նա չպիտի տար ճիշտ գնահատութիւն, և նրա «քննութիւնը» պիտի լինէր Նորայրի իրեն կարծիքներ ու դիտողութիւններ, որոնցից՝ Ազատանգեղոսի և Փարպեցու ապագայ քննական բնագիրը կազմողները կարող են օգտուել և շօգտուել, նայելով թէ ընդունելի կը համարեն նրա ասածը, թէ ոչ: Մենք մեր կողմից համաձայն ենք նրա մի քանի դիտողութիւններին, ինչպէս են, թէ պէտք էր հին ուղղագրութիւնը պահել, ի հարկէ միայն ձեռագիրներէի տուած ընթերցուածներով (թէպէտ և այդ անելն այժմ շատ էլ հեշտ չէ, որովհետև շատ բանում դեռ վիճելի է, թէ որն է հինը և որը նորը). ապա պէտք էր հարկաւ «երբեմնի» նորաձևութիւնը չմտցնել հնագոյն բնագրի մէջ, և վերջապէս կան, հարկաւ ընթերցուածներ, որ ծանօթութիւններէի մէջ գնելու փոխանակ՝ պէտք էր բնագրի մէջ առնել, ինչպէս՝ «ամպաշուփ» և ուրիշները: Բայց այդ անելու համար ամեն դէպքում առանձնապէս ուսումնասիրութիւն պիտի լինի, և ո՞վ կարող է պահանջել, որ Գ. Տ. Մկրտչեան, Ստ. Կանայեան և Ստ. Մալխասեան, որոնք ձեռագիրներէի բաղդատութեան տաժանակիր աշխատանքը յանձն են առել, այդ էլ անէին: Այդ էլ թող Նորայր Բիւզանդացին անէ, և հաւատացած ենք, որ նրա անելուց յետոյ էլ՝ մի ուրիշը կարող է նոր ուսումնասիրութիւններով ցոյց տալ, որ դեռ ուղղելի շատ

բաներ կան, և բաներ էլ կան, որոնց մէջ սխալուում է նորայր Բիւզանդացին: Ազաթանգեղոսի նման մի երկի քննական բնագիր կազմելը մի մարդու գործ չէ. դեռ ամբողջ սերունդներ պիտի աշխատեն դրա վրա: Ահա թէ ինչը չէ մտածում նորայր Բիւզանդացին: Եթէ նա այդ մտածէր, կը թուէր գոնէ մի քանիսն այն «բազում առաւելութիւններից», որ Էջմիածնի այս հրատարակութիւններն ունին իրենց նախորդների վրայ: Յառաջադիմութիւնը հետզհետէ առաւելութիւններով է լինում և ոչ թէ միանգամից կատարելութեամբ, որ նորայր Բիւզանդացու էլ ոյժից վեր է:

Մ. Ա.

Գրիգոր Մագիստրոսի «Գամագսականի» ամբողջական լուծում.  
Երկասիրեց Հ. Գաբրիել ծ. վ. Մենեկիբեան. Վիեննա 1912.

Գրիգոր Մագիստրոսը իւր նամակների մէջ յաճախ այնպիսի խրթին և յունաբան լեզու է բանեցնում, որ շատ դժուար է հասկացւում, երբեմն նոյն իսկ անհասկանալի է մնում: Վերջին կարգին պատկանում է նրա «գամագտական» կոչուած նամակը, որ մի հանելուկ է (Կոստանեանի հրատ. Ձէ նամակը): Դա մի տաղաչափական գրուածք է, որի չափը լոկ փորձում է որոշել Հ. Մէնէվիշեանը: Նորայր Բիւզանդացին 1900 թ. «Բանասէրի» մէջ հրատարակած է այս նամակը, հետը նաև նամակի մի մասի լուծումը, որ նոյն իսկ Մագիստրոսի գրածն է: Նամակի մնացած մասը չէր լուսաբանուած, և այժմ ահա Հ. Մէնէվիշեանը արդէն լուսաբանուած մասի հետ տալիս է այժմ մնացած մասի մեկնութիւնը հիմնուելով նոյն իսկ Մագիստրոսի «ոճի և բառամթերքի» վրայ և ապա երկու ձեռագիր բառարանների վրայ. մէկը «գոր արարեալ է մեծ Վարդապետին Վարդանայ ի խնդրոյ թագաւորին Հայոց Հեթմոյ», միւրը, որ արտագրուած է մի տպագիր բառարանից «Բառգիրք Հայոց արարեալ ի սուրբ Էջմիածին Երեմիա վարդապետէ» որ տպագրուած է 1698-ին «ի Յալիկառնայ քաղաքի» և 1728-ին: «Եթէ պակսէին այս բառագրքերն, ստուգիւ անմեկնելի պիտի մնային «գամագտականին» շատ մը բռները»: